սրբոյ Էջմիածնի և սրբոյ Սարգսի զօրավարի: Յամի տեառն ՌՃԾԴ նոյեմբերի ԺԸ: Համաձայնութեամբ ոմանց աստուածաբանից վարդապետաց»:

1705 թ. սկսվում է հայ կաթոլիկների Բեգօղլի թաղամասի տպարանի 1158 էջանոց ամենածավալուն գրքի՝ Աստվածաշնչի տպագրությունը, որն ավարտվում է երկու տարի հետո, 1707 թ.։ Ունի մի քանի անշուք զարդեր և մեկ դիմանկար՝ ամենավերջին էջի վրա։ Ունի նաև փոքրիկ հիշատակարան, ուր ասվում է.

«...Արդ՝ եղև գրու Աստուածաշունչ մատենիս։ Թվին Հայոց ՌՃԾԶ։
Ի շնորհազարդ հայրապետութեան և կաթողիկոսութեան սուրբ Աթոռոյն էջմիածնայ ամենայն Հայոց տեառն Աղեկսանդրի Ճուղայեցւոյ.
Ի յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի.
յար և նման. ոչ աւելի և ոչ նուազ, սակայն մանր գրով։ Ի տպարանս ազգականի նորին Ոսկանի վարդապետի Լադինացւոյ Պետրոսի.
Ի մայրաքաղաքն Ստամպօլ. Ղալաթիայ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ»։

Բանասերներից շատերը հիմնվելով այս հիշատակարանի վրա, Պետրոս Լատինացուն համարում են տպարանատեր, ինչպես և տպագրիչ մի շարք այնպիսի գրքերի, որոնց հրատարակման գործում Պետրոս Լատինացին գուցե ոչ մի մասնակցություն չի ունեցել։ Իրականում Պետրոս Լատինացու անունը իբրև հրատարակչի կա միայն Աստվածաշնչի հիշատակարանում, որ Պետրոսն իրեն անվանում է Ոսկան Երևանցու ազգական։ Ըստ երևույթին այդ ազգակցությունը հորինված է հետևյալ միտումով. ինչպես ասվում է վերը բերված հիշատակարանում, Պետրոս Լատինացին այն վերահրատարակել է «հար և նման» Ոսկանի Աստվածաշնչի։ Նա օգտագործել է նաև Ոսկանի տպարանից կաթոլիկների տպարանին անցած գլխազարդերը, վերջազարդերը, զարդագրերը, իսկ վերջում զետեղել է Ոսկանի Աստվածաշնչի Բ էջակալության 538 էջի սրբապատկերը։ Այս ամենը ժամանակակիցները կարող էին դիտել իբրև ուրիշի պատրաստի աշխատանքից օգտվելու մի արարք և կարող էր անհրաժեշտ հետևանքներ ունենալ։ Ոսկանի ազգական հռչակվելով Պետրոսը իրեն ապահովագրում էր ժամանակակիցների իրավական կամ բարոյական դատապարտությունից։ Այս ձևով հեշտանում էր նաև տպարանի իսկական տերերին ծածկելը և մեկ մարդու անունով հայտարարելը։

Այս տպարանի ամենագործուն շրջանը սկզբնավորումից մինչև 1705 թ. է։ Դրանից հետո, մինչև տպարանի փակվելը՝ 1718 թ., լույս են տեսնում համեմատաբար քիչ թվով գրքեր, դարձյալ առաջվա նման տպագրիչ-հրատարակիչների և տպագրության վայրի մասին կեղծ կամ կցկտուր տեղեկություններով։ Ահա 1708—1718 թթ. առայժմ հայտնի հրատարակությունների ցուցակը։

«Գիրք տօմարաց Հայոց, Հռոմայեցւոց և պարզատօմար ընդ որոց և տաղ Յովասափու, մարմնախաղաց և երազահան: ...Ի Մարսիլիայ քաղաքի: Եւ թուաբերութեան Հայոց ՌՃԾԷ, յունիս ամսոյն ԺԱ: Եւ ի թվին փրկչին 1708 յունիսի ԻԱ»:

«Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցւոյն մեծին Հռոմայ: ...Ի թվականութեան փրկչին Քրիստոսի ՌՉԸ, և Հայոց ՌՃԾԷ յունիսի ԻԵ: Ի Մարսիլիայ քաղաքի»:

«Գիրք մտածական աղօթից, բանալի ջերմեռանդականութ... Ի թվականութեան փրկչին Քրիստոսի ՌՉԸ և Հայոց ՌՃԾԷ, սեպտեմբեր Ի: Ի Մարսիլիայ քաղաքի»:

«Կարգաւորութեան հասարակաց աղօթից... Եւ յամի փրկչին ՌՉԹ-ին եւ Հայոց ՌՃԾԸ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս»:

«Գիրք, զորուկս այս պատմէ նախ վասն գալստեանն Յիսուսի Երուսաղէմ... Ասացեալ Երանելոյն Յակոբայ Տեառնեղբօրն: ...Յամի փրկչին ՌՉԺ-ին և Հայոց ՌՃԾԹ-ին: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս»:

«Գիրք դպրութեան եւ տաղարան վայելուչ եւ գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից... Եւ ի յամի փրկչին ՌՉԺ-ին և Հայոց ՌՃԾԹ-ին: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս»:

«Գիրք սաղմոսաց Դաւթի: ...Ի Մարսիլիայ քաղաքի: Եւ թուաբերութեան Հայոց ՌՃԾԹ յունուարի ամսոյ Ի, և թվին փրկչին 1710»:

«Մաշտոց»: Կ. Պոլիս, 1711:

«Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց: ...Եւ ի յամի փրկչին ՌՉԲ-ին և Հայոց ՌՃԿԱ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս»:

Այս «Ժամագիրքը» պահվում է Երևանի Մատենադարանում։ Ըստ Գ. Զարբհանալյանի և Ա. Ղազիկյանի՝ միևնույն տարում, նույն անվանաթերթով և չափով տպագրվել է երկրորդ